

ՀԱՐՑՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆ Ա. ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԴՐՈՇՄԻ ՄԱՍԻՆ

14) Եկեղեցոյ հայրերը ինչպէս կը մեկնաբանեն Յիսուսի մկրտութեան դրուագը:

Յովհաննէս Երգնկացին Տիրոջ Ս. ծննդեանը նուիրուած սքանչէի ճառին մէջ կ'ըսէ. «Իսկ ինչո՞ւ Երեսուն տարեկանին մկրտուեցաւ»:

Նախ, որովհետեւ նոյն տարիքին Աղամը մեղանչեց: Երկրորդ Աղամը նոյն տարիքին եւ անմեղութեամբ կը լուայ առաջին Աղամի մեղքը:

Երկրորդ, որպէսզի ամչնէ անոնց, որոնք Անոր աշխարհ դալը Երեւակայական է կ'ըսեն:

Երրորդ, որովհետեւ Երեսունը՝ վեց հինգ է կամ՝ հինգ վեց: Մկրտութեամբ մարմինի հինգ զգայարանքներն ու վեց շարժումները մաքրեց, անոնց ընթացքը ուղղելով դէպի Աստուածային բաները:

Չորրորդ, որովհետեւ մկրտութենէն յետոյ պիտի դնէր վարդապետութեան սկիզբը, երբ հոգին ստանար, թէեւ միշտ անոր հետ էր: Եւ որովհետեւ կատարեալ հասակն էր վարդապետելու ժամանակ, որպէսզի ժամանակի թերի ըլլալուն պատճառով վարդապետութիւնը չհամարուի:

Հինգերորդ, Երեսնամեայ կը մկրտուէր, քանզի ոչինչ զինք կը տագնապեցնէր չտապելու մկրտութեան, որովհետեւ ճիշդ ինքն էր չարչարանքներու տնօրինողը, ինչպէս ժամանակ...

ԱՂԱՆԴԱՒՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒԻՐ.ԵՐ

ԲԱՍԵԼԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՌՕՍ ՊԱՏԱՍԽԱՆԸ 9-ՄԵՌԵԼՆԵՐՈՒ ՅԱՐՈՒԹԻՒՆ

Պարզ չէ, որ յարութիւն՝ բոլորին համար կ'ըսուի եւ ո՛չ թէ միայն արդարներուն: Այդ մասին կասկած չի ձգեր Պօղոս առաքեալ, որ Պաղեստին-եան Կեսարիոյ մէջ, Ֆելիքս կառավարիչին ներկայութեան տեղի ունեցող իր դատավարութեան ընթացքին յայտարեց. «Յոյս ունիմ առ Աստուած, ինչպէս ասոնք [Հրեաներ] ալ ակնկալութիւն ունին, որ մեռելներու յարութիւն պիտի ըլլայ, թէ ԱՐԴԱՐՆԵՐՈՒՆ եւ թէ ՄԵՂԱԿՈՐՆԵՐՈՒՆ» (Գործք. 24.15):

10-ԴԱՏԱՍՏԱՆԻ ՕՐ ԵՒ ՀԱՏՈՒՑՈՒՄ


Դատաստանի օրուան եւ դատաստանի մասին Եհովայի վկաներ այսպէս կ'ուսուցանեն:

ա-Կ'ըսեն, թէ իրական իմաստով օր մը չէ անիկա, այլ Երկար ժամանակաշրջան մըն է, երբ իրենց արդարութեան համար մեռելներէն յարութիւն առնողները՝ անգամ մը եւս պէտք է հաստատեն Աստուծոյ հանդէպ իրենց հաւատարմութիւնը:

Սակայն Աստուածաշունչը կ'ըսէ. «Ինք [Աստուած] օր մը սահմանեց, որուն մէջ աշխարհս արդարութեամբ պիտի դատէ այն մարդուն [Քրիստոսի] ձեռքով, որ որոշեց» (Գործք. 17.31)

Սիրելի ընթերցող, ԾՐԱԳ քերքը ամէն Կիրակի կը բաժնուի մեր ժողովուրդին, Եկեղեցիներու բանկալին մօս: Նաև՝ Facebook-ի վրայ փնտուել «Jerak կամ ՃՐԱԳ», ապա սեղմել «Like»ը, կարդալու կամ անդամագրուելու համար:

ՀԱՍՑԵ.



ԲՈՒ ԽՈՍՔ ԻՄ ՈՅԵՐՈՒՄ ՏՐԱԳ Է ՈՒ ԻՄ ԾԱՌՈՒԵՐՈՒՄ ԼՈՅ
(Ս. 119.105)

ԺԱ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 12 ՕԳՈՒՍՏՈՒ 2018

ԹԻՒ 32

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՆԶԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Երգ. 4.9-15 8.14: Ես. 7.10-16: Գդ. 3.29-4.7:

ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԵՏԱՐԱՆԸ ԸՆՏ ԴՈՒԿԱՍՈՒ 2.1-7

ՎԵՐԱՓՈԽՄԱՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱՆԱՅ ՏՕՆ

Այդ օրերուն Օգոստոս կայսրը իրամանագիր հանեց, իր կայսրութեան սահմաններուն մէջ գտնուող բոլոր բնակիչներուն մարդահամարը կատարելու: Այս առաջին մարդահամարը տեղի ունեցաւ Սուլիոյ կառավարիչ Կիրենիոսի օրերուն: Ամէն մարդ իր ծննդավայրը կ'երթար իր անունը արձանագրել տալու համար: Յովսէփի Դաւիթի սերունդին ըլլալուն համար, Գալիլիայի Նազարէթ քաղաքէն ելաւ եւ իր անունը արձանագրել տալու համար գնաց Հրեաստանի Բեթղեհէմ քաղաքը՝ Դաւիթ թագաւորի ծննդավայրը: Իրեն կ'ընկերանար իր նշանածը՝ Մարիամ, որ յդի էր:

Բեթղեհէմի մէջ, Մարիամի ծննդաբերութեան ժամանակը հասաւ եւ ծնաւ իր անդրանիկ զաւակը, որ փաթթեց խանձարուրով եւ դրաւ մսուրի մը մէջ, որովհետեւ պանդոկին մէջ իրենց համար տեղ չկար:

ԱՌԱԿԱՅ (Գ. 23, 19-25)

Որդեակ իմ, լսէ՛ ու իմաստուն եղի՛ր եւ քու սիրտդ դէպի ուղիղ նամբան շտկէ՛: Մի՛ ընկերանար գինեմոլներուն ու իրենց մարմինը մաշեցնողներուն, վասն զի գինեմոլն ու շոայլը աղքատ կ'ըլլան եւ շատ քունը՝ պատուած հանդերձներ կը հագցնէ:

Հնազանդէ՛ մօրդ, որ քեզ ծներ է, ու մի՛ անարգեր քու հայրդ, երբ կը ծերանայ: Ճշմարտութիւնը ծախու ա՛ն ու զանիկա մի՛ ծախեր: Նմանապէս՝ իմաստութիւնը, իրատն ու հանճարը:

Արդարին հայրը շատ պիտի ցնծայ եւ իմաստուն զաւակ ծնանողը անոր համար պիտի ուրախանայ: Թող քու հայրդ ու մայրդ քու վրադ ուրախանան ու քեզ ծնանողը թող ցնծայ:

ՍՈՒՐԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ՎԵՐԱՓՈԽՈՒՄ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒՃԱԾՆԻ



«Վերափոխում» բառը, գրաբար լեզուով նկապի առնուած, կը նշանակէ վեր, դէպի երկինք փոխադրվիլ: Խսկապէս ալ, վերափոխումը Սուրբ Աստուճածնի մահուան յիշափակումն է, որ կը կափարուի Օգոստոս 15-ին մերձակայ, այսինքն Օգոստոս 12 - 18 հանդիպող Կիրակին:

Վերափոխումը Հայաստանեայց եկեղեցոյ հինգ դաշտարներէն մէկն է: Այս տօնին առթիւ մեր եկեղեցին կը նշէ «Քրիստոսի զայտափն ի փոխումն մօրն եւ կուպի»: Այլ խօսքով, տօնը կ'ակնարկէ այն պատահարին, ըստ որուն Քրիստոս իջաւ իր մօր մահուան առթիւ եւ զինք փոխադրեց երկինք:

ԿԱՆՈՆ ՎԵՐԱՓՈԽՈՒՄԱՆ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒՃԱԾՆԻՆ ՕՐՅ. ԴՂ (գրաբար)

Այսօր ժողովեալ սրբոցն ի միասին երանելի առաքեալքն եւ սուրբ կուսանքն ջահագեստուք պայծառացեալք լուցանեին զըլապտերս իւրեանց. եւ միաձայնեալ ասէին, օրհնեալ ես ամենօրհնեալդ ի կանայս:

(Աշխարհաբար)

Այսօր միասին հաւաքուած սուրբերը՝ երանելի առաքեալ ներն ու սուրբ կոյսերը, լուսաւոր զգեստներով պայծառացած, իրենց լապտերները կը վառեն եւ միաձայն կ'ըսեն՝ օրհնեալ ես դուն կիներուն մէջ ամէնօրհնեալ:

ՎԵՐԱՓՈԽՈՒՄ ԱԽԱԴՈՒԹԻՒՆ- ՆԵՐԵՆ՝ ԽԱԴՈՂՈՐԾՆԵՐ



«Հնաւանդ, գեղեցիկ, այլեւ բարոյալից սովորութիւն էր հայ ժողովուրդի մէջ, որ երբ բերքը կը հասնի, երախայրիքը հասունցած առաջին եւ լաւագոյն բաժինը իբրև շնորհակալիք եւ առ ի երախտագիտութիւն Աստուծոյ կը տրուի: Եթէ նախաքրիստոնէական շրջանին այս բարոյալից սովորութիւնը կար եւ ան կը մատուցուեր աստուածներուն, ապա պահուցաւ գաղափարը եւ շարունակուցաւ այդ ընծայաբերումը մէկ տարբերութեամբ՝ այս անգամ եկեղեցիին եւ անոր միջոցաւ ուր որ անհրաժեշտութիւն է:

Խաղողը բոլոր պտուղներուն մէջ նախապատիւ է, որովհետեւ անկէ կը պատրաստուի գինին, որ Ս. պատարագի, Ս. հաղորդութեան, Ս. պատի խորհուրդներուն մէջ խորհրդանշական գործածութեան կը դրուի»:

ԲԱՐԵԽՈՍՈՒԹԵԱՆ ԽՆԴՐԱՆՔ Ս. ԿՈՅՍ ԱՍՏՈՒՃԱԾՆԻՆ

Կը խոնարիինք քու առջեւդ, Սուրբ Աստուճածնին, եւ կ'աղաքնք քեզի, ո՞վ անարատ Կոյս. բարեխօսւ՛ մեր անձերուն համար, եւ խնդր՛ քու Միածին Որդիեղ, որ մեզ ազատէ փորձութիւններէն եւ մեր բոլոր նեղութիւններէն: Ամէն

ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵՐԸ

ՀԱՐՍՏՈՒԹԵԱՆ ՃԾՄԱՐԻՑ ԻՍԱՅՈՒՄԸ (Սարգիս Շնորհալի)

Հարստութիւնդ, եթէ Աստուծմէ անիր, վստահ եղիք եւ հաւատա՛, որ զաւակիդ կրկին առատութեամբ կուտայ եթէ ուզես: Պիտի ըսես, ինչպէ՞ս եթէ ուզեմ: Ինչ որ Աստուծմէ պարգեւ առիր եւ ունիս դարձեալ Աստուծոյ պարգեւէ, իսկ զաւակիդ բարեպաշտութեանդ օրինակը ձգէ եւ ոչ թէ հարաստութիւնդ: Աղքատներու երամին ըրած զքութիւնդ անոր վերակացու ձգէ: Աստուծոյ անսահման զքութիւնը եւ ոչ թէ փայլուն ոսկին. սորվեցնո՞ր ողորմութեան բարիքը եւ ոչ թէ տմարդութեան չարիքը. սորվեցնո՞ր զԱստուճած պաշտել եւ ոչ թէ մամոնան. սորվեցնո՞ր երկնաւոր բաներու ցանկալը եւ ոչ թէ երկրաւորներուն. Վարժեցնո՞ր պատուասէր ըլլալ երկնային պատիին եւ ոչ թէ մեր սին կեանքի ծաղկաբափ փառքին. սորվեցնո՞ր սիրել ոչ թէ առօրեայ կեանքը՝ անցաւորը, որ լի է դառնութեամբ, թշուարութեամբ, այլ՝ կայունը, մնայունը եւ բիրապատիկ հանգիստով լեցունը: Իսկ եթէ անիրաւութենէն զրկանքներէ հաւաքած հարստութիւնդ զաւակներուդ պիտի բոլորս, զիտցիք եւ հաւատայ, թէ ուր որ անիրաւութիւն եւ զրկանք կայ, հոն Աստուծոյ բարկութիւնը կը գտնուի:

Արդ, առաջին հերթին ինչո՞ւ Աստուծոյ բարկութեան պատճառները չես ոչնչացներ բաշխելով եւ տալով ինչքերդ, այլ Անոր բարկութեան կցորդ ու բաժնեկից կը դարձնես զաւակ: ՅՈՐԴՈՐԱԿՆԵՐ

ՀՈԳԵԽՈՐ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ

ՅԻՍՈՒՍ ԿՈՂՔԻԴ Ե ՖԵԶԻ ԿՈՒՄԱՍԿԻՑ

Յիսուս նամբորդակիցն է մարդկութեան, ուստի ո՞վ մարդ, ինչո՞ւ համար կեանքի փշալից նամբաներէն բայս առանձին: Յիսուս քիշկն է մարդկութեան, ուստի ո՞վ մարդ, ինչո՞ւ կը շարունակես հիւծիլ վերբերուդ առած ցալին տակ: Յիսուս բեռնակիրն է աշխարհին, ուստի ո՞վ բարեկամ, ինչո՞ւ կը յամանիս կեանքի բեռը առանձին կրել: Ինչո՞ւ անզօր մնաս երբ առիթը ունիս վայելելու Յիսուսի օրուակցութիւնը: Ինչո՞ւ տկար մնաս, երբ կարող ես Ամենակարող Աստուծոյ դառնալ եւ անոր գօրութեամբ լեցուիլ: Ուտի կանգնի՛ր Յիսուսի անունվ օրացած: Դուն կրնաս ամրոցներ փուլ բերել, եթէ երբեք իբրև իսկական ամրոց բնդունիս Յիսուսը:

ՀԱՅՐԵՐՈՒՆ ԽՈՍՔԵՐԵՆ ԱՍՏՈՒՃԱԾՈՒՆՉԻՆ ՍԱՍԻՆ

Երբ բանաս սուրբ Աւետարանը ընթերցելու համար յիշէ, որ ան է որ պիտի որոշէ քու յախտենական վիճակի: Անով է, որ պիտի դատուինք: Այստեղ անոր նկատմամբ մեր ունեցած վերաբերմունքին համեմատ պիտի յատուցուինք մեզի կամ յախտենական երանութիւն, եւ կամ յախտենական պատիժ (Իգնատի Բրեանչանինով):

Չեմ զիտեր, արդեօք կրնա՞յ նորոգուիլ միտքը այն մարդուն, որ անտարբեր է Սուրբ Գիրքին եւ հոգեւոր զիտութեան մէջ վարժութիւն ձեռք ձգելու նկատմամբ (Որոգինէս Աղեքսանդրացի):